



Կարգապահական գործ թիվ ԿԳ-16121

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի հունվարի 16-ի թիվ 10-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Թ Ի Վ ԿԳ/7-Ա

**ՓԱՍՏԱՔԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեծլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Երվանդ Վարոսյանի, Կարեն Սարգսյանի, Քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, Քննության առնելով փաստաբան Հովհաննես Լազարյանին (արտոնագիր թիվ 729) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին 18.07.2016թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Հովհաննես Լազարյանը (արտոնագիր թիվ 729) 2016թ. հունվարից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի չկատարված պարտավորություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի առաջին տեղակալի 26.07.2016թ. թիվ 276-Ա/ԿԳ-16121 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Հովհաննես Լազարյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ ԿԳ-16121):

Կարգապահական գործի արագացված կարգի համաձայն՝ սույն կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2017 թվականի հունվարի 16-ին, ժամը՝ 18:52-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Հովհաննես Լազարյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Հովհաննես Լազարյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 19.10.2007թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 03.10.2016թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Հովհաննես Լազարյանն ունի 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2016թ. հունվարից 2016թ. հունիս (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Հովհաննես Լազարյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 03.10.2016թ. տեղեկանքի համաձայն՝ Հովհաննես Լազարյանը փաստաբանական գործունեության թիվ 729 արտոնագիրը ստացել է 19.10.2007թ.: Հովհաննես Լազարյանի նկատմամբ 2007-2016թթ ժամանակահատվածում 10 կարգապահական վարույթով կայացվել են որոշումներ՝

- Խորհրդի 25.02.2010թ. թիվ 5/1, 09.11.2010թ. թիվ 30/5, 09.08.2011թ. թիվ 16/3, 02.04.2012թ. 1/12003ԿԳ, 23.05.2014թ. նթիվ 86/1-Ա որոշմամբ Հովհաննես Լազարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) կարճվել են:
- Խորհրդի 04.08.2010թ. թիվ 18/3 որոշմամբ Հովհաննես Լազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն.

- Խորհրդի 16.01.2015թ. թիվ ԿԳ/6-Ա որոշմամբ Հովհաննես Լազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ նկատողություն.
- Խորհրդի 06.07.2015թ. թիվ ԿԳ/75-Ա որոշմամբ Հովհաննես Լազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական խիստ նկատողություն.
- Խորհրդի 28.09.2015թ. թիվ ԿԳ/125-Ա որոշմամբ Հովհաննես Լազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք (10.000 ՀՀ դրամ).
- Խորհրդի 06.10.2015թ. թիվ ԿԳ/139-Ա որոշմամբ Հովհաննես Լազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք (15.000 ՀՀ դրամ).
- Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/40-Ա որոշմամբ Հովհաննես Լազարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով) և վերջինիս նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ տուգանք (20.000 ՀՀ դրամ);

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հովհաննես Լազարյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ

ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Հովհաննես Լազարյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.01.2017թ. տրամադրված տեղեկանքով: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հովհաննես Լազարյանին (արտոնագիր թիվ 729) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Հովհաննես Լազարյանի (արտոնագիր թիվ 729) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 25.000 դրամ:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Հովհաննես Լազարյանին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեծլումյան